ԽՆԿՈ ԱՊԵՐ
ԸՍՏ ԲԱՐՏՈՅԻ

# ԻՄ ԴԱՍԸ



## 1-ԻՑ 10-Ը

ՆԿ. Բ. ՊԱԿՐՈՎՍԿՈՒ

ՊԵՏՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

13 MAY 2013
9805
891.99ԼՙՀ
2011-07
Խ-64
Ար
3914 100/32705



Մի տան կռթան չալ Զալուրիկ, տրիկ-տի-տրիկ, տակին ձվեր, դարմանում եր․
—Եսքան յերկար տուտիկ անեմ, կըռթ-կըռթալեն մուտիկ անեմ, ճուտ չհանեմ...



# 1

Մեկն ել մի ձու տակից տրաքեց։ Լույս ընկավ կլորիկ ձագ։ Նա սուս... սատեց-նստեց, նոր ըն-կերի սպասեց։

# 1+1=2



Մեկն ել լսեց․ հանկարծ ճաքեց մի նոր ձվիկ։ Նոր ծլվլուկ ընկավ լույս։ Մեկ և մեկ՝ յեղան յերկուս։

Յերկուսով սուս... նստեցին-նստեցին, նոր ըն-կերի սպասեցին։

Յերրորդ ձվիկից, նեղ տնակից լույս ընկավ նոր ընկերակից։ Պուճ-պուճուրիկ, պուճուր քուրիկ։ Յերկուս և մեկ՝ յեղան յերեք։ Յերեքով սուս… սստեցին, նստեցին, նոր ընկերի սպասեցին։

**2+1=3**



Կրկին մի ձու ճաք, տրաք. լույս ընկավ էլի նոր ձագ. յերեք և մեկ՝ յեղան չորս,—չորս ճանճավորս։

Չորսով սուս-փուս սստեցին, նստեցին, նոր ընկերի սպասեցին։

**3+1=4**



Թխսի վերջին ձվիկից լույս ընկավ քիթը ցից մի նոր քուրիկ. տը՛նկ-տինկ։ Չորս և մեկ՝ յեղան հինգ։

**4+1=5**



Հետո Չալտիկն սկսեց ճուտիկներին դուրս հանել—փողոց տանել։ Չի ննջում, հորանջում, իրեն շատ է տանջում, չարչարում, ճուտիկներին կեր ճարում։ Հեռանում են, ձայն է տալիս, մոտ կանչում։



**5**

Հարևան տան մի կռթան Փումփուլիկ նույն-պես հանեց ծըլվըլիկ, հինգ ձվիկ, հինգ խըլվըլիկ։



$1+1=2$
$2+1=3$
$3+1=4$

Փումփուլիկը, հինգ ճուտին հետն առած՝ փո-ղոց գնաց։ Ճուտերի հետ չի շրջում՝ վեր-վար նայում, կանգնած մնում, հորանջում։ Ճուտիկները ծիվ-ծիվ-ծիվ, ման են գալիս ցաք-ցրիվ, վոչ լրիվ Մի ճուտիկն առաջ, յետ, կորավ անհետ։ Մեկ, յերկուս, յերեք, չորս. վա՜յ... ափսո՜ս. չե՞ հինգ եյին, վո՞րտեղ փնտրենք մեկին։

# $5+1=6$



Իսկ Ջալոտիկը զարմանում է, ընտանիքը շա-տանում է։ Հինգ և մեկ—վեց։ Վեցով ցեց։ Ուտել են ուզում։ Մորը բզբզում, շուրջը վազվզում։

# 1+1=2. 2+1=3



Փումփուլիկը փըտրում էր մանչուն·
Հանկարծ աղջիկն է կորչում:
Ինչ կուզեք, արեք՝ ճկույթ, մատնամատ, մի-
ջամատ, ցուցամատ, բութ մատ մեջ բերեք…
Մեկ, յերկուս, յերեք:

# 6+1=7



Իսկ Ջալոիկի մոտ, վեցը դառավ յոթ:

# 1+1=2



Փումփուլիկն, ո՜, ինչ բաց բերանն է, մայր լինելը նրա ինչ բանն է։ Գլուխը հոլի պես փրռ-ռաց. մեկն ել գնաց. յերկուսը մնաց։ Մեկ և մեկ — յերկու։ Կիկլի-կու... յերկու ծիկ... մանչիկ — աղ-ջիկ։

# 7+1=8



Հիմա գանք, հարց տանք։ Զալոիկլի մոտ քանի ճուտ։ Յոթ և մեկ — ութ։



# 1



*Փախավ Փումփուլիկի և աղջիկը։ Կփախչի և մանչիկը։ Սուս-փուս նստել-նստել, մորից ծածուկ ծկլատում է ծկլատում, ծլկելու յե աշխատում։*

# 8+1=9



*Ծուտիկները Զալտիկի մոտ յեղան մի ջոկատ.*
*Ութ և մեկ՝ ինը հատ.*
*Մի բան էլ [illegible]*

ՀՍԽՀ-СССР
им. А. Мясникян



Փումփուլիկի բանն է վատ։ Մանչն էլ ծլկեց աննկատ։ Կորան հինգը։ Մնաց ինքը մեն-մենակ, դափ-դատարկ. ու ձագ չկա կրծքի տակ։ Վեր, վար ընկած՝ վոտի վրա տնկտնկաց։

Կոթաց-կղտաց, հորանջեց, ծիկ-ծիկ կանչեց։

Վերջին ճուտն էլ թև ու վոտ. Թը՛ռ—Թռավ Զալտիկի մոտ։

Այնտեղ լավ էր յերևի։ Տես, վոր լավն էլ կա հավի։

Հավաքվեցին մի հասակ ճուտիկները ճիշտ տասնյակ։

Գիրք կարդացողն հաշվեց արդեն։

Զալտիկի մոտ ճուտիկները ճուտ Ջոկատում քանի՞ հատ են։

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10։




Պատ. խմբ. Ա. ՀԱՅՐՅԱՆ
Տեխ. խմբ. [redacted]
Սրբագրիչ Գ. ԱԹՂՅԱՆ
Գլավլիտ 8599 Հրատ. 3032
Պատվեր 1015 Տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 19|VI 1934 թ.
Ստորագրված է տպագրության համար 19|IX 1934 թ.

ՀՍԽՀ-ՍՍՐ
Им. А. Мясникяна
ՀՀ Ազգային գրադարան
NL0396897

9805

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

ХНКО АПЕР
ПО А и. П. Барто
**СЧИТАЛОЧКА**

ГИЗ. ССРА ЭРИВАНЬ